ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 742

23.10.2018թ. N 23102018-06-0015 ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ, 06-007-0104-0031 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻ, 0.05012 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ավագանու գոտիավորման նախագիծը հաստատելու մասին 14.11.2025թ. թիվ 97-Ն որոշումը, ՀՀ Լոռու մարզպետի 21.05.2024թ. թիվ 266-Ա որոշումը, 23.10.2018թ. N 23102018-06-0015 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ՀՀ կառավարության «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 30 նոյեմբերի 2006 թվականի N 1724-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. 23.10.2018թ. N 23102018-06-0015 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի, 06-007-0104-0031 կադաստրային

ծածկագրի, 0.05012 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 օգոստոսի 2026 թվականի N 743

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 195 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 14.03.2026թ. թիվ Կ-14032026-06-0090 որոշումը, «Սամվել Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից 20.04.2026թ. կազմված տեղագրական հատակագծերը, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35- րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 2026 թվականի մարտի 2-ի թիվ 195 որոշման 2-րդ կետից հետո ավելացնել 2.1. կետ հետևյալ բովանդակությամբ.

Ք. Ստեփանավան Դուրյան փողոց 22/1 և 22/2 հասցեների 0.055 հա հողամասին կից՝ 06-007-0009-0031 կադաստրային ծածկագրով, չափագրման հատակագծում նշված 51.54 քմ մակերեսով կառուցապատված և 105.3 քմ մակերեսով չկառուցապատված հողամասերը հանդիսանում են Նիկոլայ Ալեքսանդրի Աղաջանյանի, Ալլա Ալեքսանդրի Աղաջանյանի և Արթուր Սերգեյի Աղաջանյանի ընդհանուր համատեղ սեփականությունը:

2. Ստեփանավան համայնքի ղեկավարի 02.03.2026թ. թիվ 195 որոշման և սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են իրավունքների պետական գրանցման:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2026 թվականի N 744

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10 ՕԳՈՍՏՈՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ N 699 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 կետով՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 10 օգոստոսի 2026 թվականի N 699 որոշման հիմքերում <<19.09.2013թ. թիվ 2026H3UYJM>> մուտքագրման տեղեկանքը փոխարինել <<2026JG928A>> հաշվառման տեղեկանքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից: Որոշումից ծագող իրավունքները ենթական են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2026 թվականի N 745

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՍՑԵՈՎ 06-007-0279-0015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարդան Գարեգինի Սարգսյանի կողմից ներկայացված 25.05.2026թ. թիվ 1507 դիմումը, «Սամվել Ֆրանգյան Կամսարի» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011AGDZW8N ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան հասցեով 06-007-0279-0015 կադաստրային ծածկագրում գտնվող անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Ա. Միքայելյան փողոց 46/1 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2026 թվականի N 746

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐՎԱԾ 27.07.2026Թ. ՀՈՂԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՂՎԱԾՔԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան համայնքի ղեկավարի 27.07.2026.թ. տրված 01.01.1994թ. թիվ 5 որոշման քաղվածքը, ղեկավարվելով՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Անվավեր ճանաչել Ստեփանավան համայնքի ղեկավարի 27.07.2026թ. տրված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 01.01.1994թ. թիվ 5 որոշումից քաղվածքը և հիմք ընդունել համայնքի ղեկավարի կողմից տրված 21.08.2026թ. հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 01.01.1994թ.թիվ 5 որոշումից տրված քաղվածքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 օգոստոսի 2026 թվականի N 747

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 65-րդ հոդվածով՝ ***որոշում եմ.***

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի վարչական շենքում՝ 2026 թվականի օգոստոսի 26-ին՝ ժամը 11.30-ին, հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի կողմից «Ստեփանավանի Պատվավոր Քաղաքացի» կոչում շնորհելու և «Ստեփանավանի Երախտագիտություն» պատվո նշանով պարգևատրելու առաջարկը հաստատելու մասին
4. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 24 հունիսի 2026 թվականի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի

առաջին նիստի գումարման օրը սահմանելու մասին» N 57-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

5. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման մասին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման մասին
6. Հայաստանի Հանրապետության մարզ Լոռի, համայնք Ստեփանավան Ստեփանավան քաղաք Մարշալ Բաղրամյան փողոց 111/31 հասցեում գտնվող, 06-007-0006-0036 կադաստրային ծածկագրով 0.002 հա մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին
7. Համայնքային սեփականություն հանդիսացող, 06-007-0007-0076 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին
8. Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 օգոստոսի 2026 թվականի N 748

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐՄԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արման Ավագյանի 2026 թվականի օգոստոսի 21-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Ստեփանավան համայնքի ավագանու 19.12.2025թ. թիվ 108-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ***.

1. Ստեփանավան համայնքի Բաղրամյան փողոց թիվ 40 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արման Ավագյանի հայտը բավարարել և նրան տալ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն ընթացիկ տարվա երրորդ եռամսյակի համար՝ 01.07.2026-30.09.2026թթ.:
2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:
3. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժնին տուրքերի գանձումները կատարել ըստ գործող կարգի:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՈՒԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 749

ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 180 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ԵՎ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արամ Արթուրի Առաքելյանի կողմից ներկայացված 10.08.2026թ. թիվ 2351 դիմումը, 15.05.2026թ. թիվ 15052026-06-0090 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, Ա/Ձ ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄՍԱՐԻ կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, քաղաք Ստեփանավան Մարշալ Բաղրամյան փողոց 180 հասցեում գտնվող, 06-007-0312-0004 կադաստրային ծածկագրում գտնվող, ըստ փաստացի չափագրման 0.00403 հա մակերեսով անշարժ գույքի տեղադիրքը և սահմանային չափերը՝ համաձայն Ա/Ձ ՍԱՄՎԵԼ ՖՐԱՆԳՅԱՆ ԿԱՄՍԱՐԻ կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 750

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՔԱՂԱՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ, ԴԵՍԻՆԻ ՓՈՂՈՑ 69/9 ՀԱՍՑԵՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Օլյա Հայկազի Զաքարյանի կողմից 12.08.2026թ. ներկայացված թիվ 2384 դիմումը, 18.04.2003թ. տրված թիվ 1659973 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, 01.10.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիր՝ նոտարական ակտի կոդ 595-20211001-84-5422219, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011AJL5GXN ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. ՀՀ Լոռու մարզ, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Դեսինի փողոց 69/9 հասցեով, 06-007-0103-0003 կադաստրային ծածկագրով բազմաբնակարան շենքի 2-րդ հարկում գտնվող Օլյա Հայկազի Զաքարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան, Դեսինի փողոց 69 շենք 9 բնակարան:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 751

ՄԱՐԶ ԼՈՌԻ, ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-007-0038-0010 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, ԱՐԵՆ ԱՇԽԱՐԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արեն Աշխարիկի Պողոսյանի կողմից ներկայացված 21.07.2026թ. թիվ 2066 դիմումը՝ Լոռու մարզ համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Նալբանդյան փողոց թիվ 6 հասցեում 2019 թվականին ինքնակամ կառուցված շինությունը օրինականացնելու մասին խնդրանքը, 27.03.2025թ. N 27032025-06-0089 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղագրական հատակագծերը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 16.07.2026թ. թիվ 2026PEKV79 ծածկագրով տրամադրված հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը և ինքնակամ կառույցների հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ տվյալ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը և քանի որ շինությունները կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ուստի ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով,

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ **որոշում եմ.**

1. Օրինականացնել Լոռու մարզ համայնք Ստեփանավան Ստեփանավան ք. Նալբանդյան փողոց թիվ 6 հասցեում գտնվող, Արեն Աշխարիկի Պողոսյանին սեփականության իրավունքով պատկանող, 06-007-0038-0010 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0.0345 հա մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված ճաշարանը՝ 46.07 քմ ներքին մակերեսով, ճաշարանը՝ 64.24 քմ մակերեսով:
2. Օրինականացման համար համայնքի բյուջե վճարել՝ 46.07 քմ ներքին մակերեսով ճաշարանի համար 90712 /իննսուն հարյուր յոթ հարյուր տասներկու / ՀՀ դրամ, 64.24 քմ ներքին մակերեսով ճաշարանի համար համար 126489 /մեկ հարկուր քսանվեց հազար չորս հարյուր ութսունինը/ ՀՀ դրամ: Ինքնակամ կառուցված շինության օրինականացման համար նախատեսված գումարը, վճարվում է համայնքի բյուջեի թիվ 900255001712 հաշվեհամարին:
3. Հողամասի սահմանները, մակերեսը և հողամասում առկա շինության տեղադիրքը որոշվում է «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի համաձայն:
4. Օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 752

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Գրիգորիի Մովսիսյանի / ն/ք 020440442, ծնված 14.11.1974թ./ կողմից ներկայացված 13.07.2026թ. թիվ 1981 դիմումը, Ստեփանավան համայնքի գլխավոր հատակագիծը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղադրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 07.07.2026թ. թիվ 2026CFVPUF ծածկագրով տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը, ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական 06-007-0240-0003 կադաստրային ծածկագրում գտնվող Արմեն Գրիգորիի Մովսիսյանի կողմից 1998թ.-ին ինքնակամ կառուցված՝ 18.6 քմ մակերեսով ավտոտնակը, առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 0.00706 հա մակերեսով հողամասը

համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:

2. Ավտոտնակի համար անհրաժեշտ 0.00706 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համաձայն «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված տեղադրական հատակագծի փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

3. Հողամասի տեղադիրքը, սահմանային չափերը և մակերեսը հաստատել համաձայն «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղադրական հատակագծի:

4. Ինքնակամ կառուցված ավտոտնակը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում 18.6 քմ մակերեսով ավտոտնակի և 0.00706 հա մակերեսով զբաղեցված հողամասի նկատմամբ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք, ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 753

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռուդիկ Շմավոնի Դալլաքյանի/ անձնագիր՝ AV0550098, ծնված 12.08.1996թ./ կողմից ներկայացված 04.08.2026թ. թիվ 2287 դիմումը, Ստեփանավան համայնքի գլխավոր հատակագիծը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղադրական հատակագիծը, ՀՀ կառավարության 05.01.2022թ. թիվ 14-Ն որոշմամբ սահմանված կարգով հաստատված 29.03.2026թ. թիվ 2026TFKNCB ծածկագրով տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը, ինքնակամ կառույցի հաշվառման փաթեթի վերաբերյալ համաձայնությունը, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել օրինական 06-007-0252-0001 կադաստրային ծածկագրում գտնվող Ռուդիկ Շմավոնի Դալլաքյանի կողմից 2016թ.-ին ինքնակամ կառուցված՝ 28.3 քմ մակերեսով ավտոտնակը, առանձնացնել զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի թվին չդասվող 0.00329 հա մակերեսով հողամասը

համաձայն հավելվածի և նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքը:

2. Ավտոտնակի համար անհրաժեշտ 0.00329 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված տեղադրական հատակագծի փոխադրել բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:

3. Հողամասի տեղադիրքը, սահմանային չափերը և մակերեսը հաստատել համաձայն «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված տեղադրական հատակագծի:

4. Ինքնակամ կառուցված ավտոտնակը՝ չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանում 28.3 քմ մակերեսով ավտոտնակի և 0.00329 հա մակերեսով զբաղեցված հողամասի նկատմամբ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն նշված կառույցը իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 754

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և առաջնորդվելով Ստեփանավան համայնքի ավագանու 2026 թվականի 26 օգոստոսի թիվ 64-Ն որոշմամբ՝ ***որոշում եմ.***

1. Սահմանել Ստեփանավան համայնքի 2026 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային համամասնությունները՝ համաձայն հավելվածների:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնք ք.Ստեփանավան,
+374 256 2 22 33, 2 21 24, stepanavan.lori@mta.gov.am / stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 755

ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք.ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 173/1-1/1, ՄԱՐԶ ԼՈՌԻ ՀԱՄԱՅՆՔ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Ք. ՍՏԵՓԱՆԱՎԱՆ Մ. ԲԱՂՐԱՄՅԱՆ ՓՈՂՈՑ 3 ԹԻՎ 117/3 ՀԱՍՑԵՆԵՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԵԿ ՄԻԱՎՈՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սուրեն Եղիշի Այվազյանի կողմից 18.08.2026թ. ներկայացված 2442 դիմումը, 04.07.2016թ. տրված թիվ 04072016-06-0030, 04.07.2016թ. թիվ 04072016-06-0011 անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականները, 17.08.2026թ. Ստեփանավան համայնքի ղեկավարի թիվ 719 որոշումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին քաղվածքը՝ ծածկագիր 06011KSDJAJW ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝որոշում եմ.

1. Մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Բաղրամյան փողոց, թիվ 173/1-1/1 և մարզ Լոռի, համայնք Ստեփանավան, ք. Ստեփանավան, Մ. Բաղրամյան փողոց թիվ 117/3 հասցեներով՝ անշարժ գույքերի միավորման արդյունքում առաջացած՝ մեկ միավոր անշարժ գույքին տրամադրել նոր փոստային հացե՝ ՀՀ Լոռու մարզ համայնք Ստեփանավան ք. Ստեփանավան Մարշալ Բաղրամյան փողոց 117/3 հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«27» օգոստոսի 2026 թվականի N **756**

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 21 ՀՈՒՆՎԱՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.01.2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 07 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 59 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեփանավան համայնքի ղեկավարի 21 հունվարի 2026թ.-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու և համայնքի ղեկավարի 08.01.2025 թվականի «Համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» թիվ 07 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 59 որոշման, 5-րդ հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ